

ՄԻՈՒԹԻՒՆ

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. Տ Ա Ր Ի

ԱՌԵՆՔ

1901

Փ Ե Տ Ր Վ Ա Ր

Թ Ի Ի 45



ՏՆ ԳԱՆՆԻՈՒԹԻ

Տիկին Գալլիօթի 1900 թ. 27ին մեռաւ Աթէնքի մէջ 56 տարեկան: Իր անունը սերտ կապ ունէր իր մեծ հայ Յեղափոխութեան հետ: Իր ամուսնու մը ընթացքին իր ամուսնու զաւակ ընտանիքի և ազնուական յայն ընտանիքի, իր անունը չատնել չըլնակի մը մէջ մային ծանօթ էր ի Կ. Պօլիս, ալ անիւ յետոյ գրեթէ մոռցուեցաւ այդ Հայաստանի բարեկամուհին:

Դասակարգական կուսակցութիւնը երբ մուտ գտաւ Կ. Պօլիս, գործիչներու խումբը ապահով ազատամարտի մը ունեցաւ Տիկին Գալլիօթի տունը, հոն կը կատարուէր կօմիտէին նիստերը, հոն էր իր կեդրոնը և վերջապէս ամեն ինչ: Անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանիլ թէ՛ Պօլսոյ Դրօշակեան կօմիտէն իր ունեցած յաջողութեանց գէթ մեծագոյն մասն կը պարտէր այս կնոջ անձնութեան և գաղտնազանութեան...

Դիտելու արժանի էր Տիկինը հարպիկ գործունէութիւնը, որ իր ամուսնոյ պ. Ղազարոսի հետ, ակնթարթի մը մէջ կը թաղցնէր իր հակողութեան յանձնուած պօմպէն, զենքերը ու գրութիւնները, վտարուած երկրասարդները հոն իր ձեռքին տակ, ազատ էին ոստիկանութեան հալածումներէ: Իսկ ինքը սրտի անհուն գոհունակութիւն մը կ'զգար չարատանջ Հայաստանի ազատութեանը գործին մասնակցելուն համար:

Իր ամուսնին պ. Ղազարոս, վտանգուելով ստիպուեցաւ թողուլ Պօլիսը, և անկէ յետոյ բաղմապատկուեցաւ իր ծանր աշխատութիւնները, որոնց ամենն ալ կը կատարէր ա-

ռանձինը:—Ինչպէս անտարբեր մնամ, կ'ըսէր երբ հայ ազգը շարժումի մէջ է, իմ վրայ ահադին պարտականութիւն մը կը ծանրանայ և զգացումներս զիս կը տանջեն. եթէ անբաժին մնամ հայ ազգին ազատութեան գործին մասնակցելու... Անկողին ինչպէս առաջ, մի օր այցելեցի իրեն, յեղ. գործին վրայ կը խօսէինք. երբ գիտողութիւն ըրաւ, արդար զայրոյթով մը. «—բայց ինչո՞ւ կօմիտէները չեն միանար, դեռ չի հասկցան որ ասանկ գործերը միայնալ ոյժի կը կարօտի»:

Պանքայի հերոսական (!) ցոյցին հետեւանօք, Տիկին Գալլիօթի կորսնցուց իր ֆիզիքական ու նիւթական ոյժերը: Թուրք կառավարութեան ճնշումները ծանրացան իր վրայ, սրտի հիւանդութիւն մըն ալ ժառանգեց, որը եկաւ քայքայել արիւստիւր կնոջ հոյակապ կազմութիւնը, նա՛ իր տառապանքներուն միջոցին չի փորձուեցաւ երբէք օր մը, որ տրտնջէր ու հայ յեղափոխութիւնը բամբասէր: Ուր էր թէ հայ տիկիններն ալ հետեւին այս օտար կնոջ օրինակին, բայց դժբաղդաբար Պօլսոյ մէջ տեսայ հայեր ու հայուհիներ, որոնք նիւթական միասնիք միայն ունենալով, լրբօրէն կը նախաձեռնէին ազգի ու յեղափոխութիւնը:

Տիկին Գալլիօթի հիւլէնուհի ծնաւ, բայց հայուհի մը մեռաւ: Թող ապրի իր անուան յիշատակը հայ հերոսներու ցանկին մէջ:

ՀՐԱԽԻՐԱԳԻՐ

ԼՂՐԵՆՍԻ ԺՈՂՈՐԴԱԿԱՆ ԵՎ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՊՈՐՏԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ԽՆԴՐՈՑ ԱՌԵՐԻ

Սիրելի Հայրենակիցներ: Դուք ամենքդ ալ գիտէք որ բռնապետ կառավարութեան մը ճնշումները մեր մէջ յեղափոխական դադարաւոր ստեղծեց, ու այդ դադարաւոր ընդլայնուեցաւ այն բանին համար, որ նպատակը սուրբ էր և վսեմ:

Ազգային ազատագրութեան հարցը մեր ամենուս սրտին մէջ լայն տեղ մը գրաւած էր այն օրէն սկսեալ: Ու այսօր կը գտնուինք այն ճիւղաճիւղի մէջ, որ եթէ ուղիւնք պիտի ապրինք, եթէ ուղիւնք պիտի վայելնք Մայր-Հայաստանի ազատութեան երջանիկ օրերը, պայմանաւ որ ամենքս միասին մէկ կողմ նետենք մեզի կաշկանդող ծուլութեան չղթան, որովհետեւ բռնութեան և ազատութեան մենամարտն է, որ կը մղուի երկու անհաւասար ուժերու միջև: Եւ այդ կռիւնը սկսած է արդէն ու պէտք է շարունակել, այն համոզումով միայն թէ հայկական դատի վերջնական լուծումը մեր բազմակիցութեան ուժէն և մեր միութեամբ գործելէն կ'ստուգուի: Բայց դժբաղդաբար միութեամբ գործելու ամենայնաւորապէս օրերուն մէջ, ակամայ ստիպուած ենք զբաղուիլ յեղ. միութեան խնդրով: Որովհետեւ այդ յեղափոխական կուսակցութիւնները փոխանակ զիրար բարձրացնելու և յեղ. գործին զարգացման աշխատելու, միշտ ջանացած են գտնուիլ

Բաժնեկցի փոխարէն ամեն երկրէ կընդունուի նամակադրոշմ (փուլ):

Սմեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին և առաւաւելն երեք ամիսէն չեն վճարեր չորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան:

այն ընթացքին մէջ, որ մեզի ազդովն կուստեան կը մատնէ: Ու մենք, հայ ոչ-կուսակցական ժողովուրդս, մէկ կողմ թողով արտաքին լինեալն յաղթելու խորհուրդները, ըստիպեալ ենք կուսի մեր ներքին թշնամիներու հետ, որոնք մեր արեւնը ծծելու և մեր հողին մաշեցնելու չափ առաջ դացած են, օգտուելով մեր անտարբերութեան: Հայ ժողովուրդ, տեսնելով կուսակցութեանց բարոյական ուժը՝ երբեմն արհամարհեց, բայց այսօր մենք ալ պէտք է խորհինք թէ լոկ արհամարհեցր բաւական չէ յեղ. ասպարէզը մարելու, այլ մենք ժողովրդականներս ընդհանուր համաձայնութեան մը գալով աշխատելու ենք արդէն հրապարակուած միութեան գաղափարը իրադրութիւն, ու թող տալու չէ այլ ևս որ կուսակցութիւնները իրենց հաճոյքին համեմատ վարուին մեզ հետ: Եւ ժողովրդական ընդհանուր համաձայնութիւնը առաջ բերելու միակ նպատակաւ ԼՂՐԵՆՍԻ ոչ-կուսակցական ժողովուրդս հոկտ. 21ին (ն. տ.) կազմակերպուելով, որոնց իր կանոնադրութեան մէջ դնել հետեւեալ նպատակը:

ՆՊԱՏԱԿ.— Ոչ-կուսակցական ժողովրդային կազմակերպութեան նպատակն է կուսակցութեանց մէջ միութեան առաջ բերելու համար ամէն ջանք ի գործ դնել, և ներկայ տաժանեկ խժժութեանց առաջը առնել:

Եւ ամենքս մէկ համախմբուած ենք այս միակ ու բարձր նպատակը դրօշին տակ, վստահ ըլլալու ենք որ պիտի կարողանանք փրկարար դեր մը կատարել: Ուրեմն ներկայ հրապարակուած կոչում կ'ընենք ու կը խնդրենք բոլոր Ամերիկայի և արտասահմանի ոչ-կուսակցական ժողովուրդներէն որ կազմակերպուին յանուն 100 հազարներու թափուած արեան, յանուն մեր լլկուած քոյրերու և մայրերու, յանուն այն կտորճներու, որոնք բանտերու խոնաւ օդին մէջ չղթալակալ կը հիւծին, յանուն մարթուած մատաղ մանկիկներու, յանուն պղծուած եկեղեցիներու, յանուն մեր զսպացման նպատակ դարձնուած, յանուն մեր մարդկային իրաւունքներու բռնաբարձման, և յանուն Հայաստանի ազատութեան մեծ գաղափարին— կազմակերպուած բողոքներ, հայ ժողովուրդ, ու պահանջենք յեղափոխական կուսակցութիւններէն որ, վերջ տան կուսակցական պայքարին ու միութեան փրկարար գործը գլուխ հանելու աշխատին որով միայն արդարութեան արեղակին փայլուն լոյսը պիտի տարածուի հոգեվարք Հայաստանի վրայ, զայն կենդանացնելու:

Բարոյաւ ամենամեծ պարտականութիւնը կը պահանջէ մեզմէ, որ մեր հայ ժողովրդեան օրօրոյցի մասնուկէն սկսեալ մինչև զառամեալը՝ աշխատինք կազմակերպուելով ստեղծել հայ յեղափոխական միութիւնը: Հայ ժողովուրդ, եթէ կը խորհինք մեր ազգային յեղափոխական յետամնաց վիճակին վրայ, պէտք է որ մենք ալ զգանք մեր պարտականութիւնները, պարտականութիւն մը, որ դժբաղդաբար մի ու թիւն են պոռախնա եղած է: Մեր անտարբեր ու դատապարտելի ընթացքը շարունակելով թոյլ տալու չենք, որ յեղ. կուսակցութիւնները մեր ամենատարա-կան իրաւունքներուն իսկ տէրը դառնան. վերջապէս համոզուելով, որ ազգի մը կենդանութիւնը հաստատ կը մնայ միութեամբ, պէտք է

որ հաւաքենք մեր բոլոր ցրուած ուժերը, կռուի մեծ ուժը պատրաստելու համար. և ով որ յանգզնի խոյստ ալ, Հայաստանի դահլիճըն ու ռիսիկը միմիջինա մի նէ:

Ի դիմաց

Ոչ-Կուսակցական Ժողովրդային Միութեան
22 Դեկտ. 1900 (Կնիք)

13 P. O. Box, Lawrence Mass
(U. S. America)

Յ. Գ. Կը յուսանք թէ ներկայ առաջադրեալ նպատակը Ամերիկայի և արտասահմանի մէջ արձագանգ գտնելով, և օր առաւմիմեանց հետ թղթակցելով, պիտի ջանանք մեր պահանջին վերջնական կարգադրութիւնը ընել:

Նոյն

ՊԻՐ ԻՔԻ ՍԷՕԶ

Ժէօն-Թիւրքէր իւր էրմէնիւթին իտթիֆազ իթմէսի լաղըմ օլտուղունայ տայի Տամատ Մահմուտ փաշանըն նէշը իթմիշ օլտուղի պէյաննամէ իւղէրինէ պու պապտէ պաղը իֆատէյի հալի մաթպանըղայ կէօնտէրմիշ օլտուղում «վերէգայի» կէշէնքի նիւսիէնիլուէ տէրճ պուլըրումուշ իտինիլ: Շիմտիաէ տահա պիւր իթի սէօզ սէօյլէմէյէ մուսատէնիլ թէմաննի իտէրիմ:

Այնը մուտալէթը հտփի էրմէնի վաթանտալարըմըղտան պիւր զաթ թարաֆընտան Լօնտրատայ թապ օլտուան «Օսմանլը» կաղէթայի մէօյթէպէրէսինէ իրսալ իթտիղի վերէգա իւղէրինէ, պիւր արնաւլուտ իմղասը իւր, մէգըր կաղէթանըն 75 նօմէթօլը նիւսիէսինտէ տէրճ օլտուան մէգալէտէ էրմէնի վաթանտալարըմըղտան ֆիթրի թատիք իւր պէրապէր «Օսմանլը» իտարէի զալիմէսինտէ պուլըրումուան պիւրիւմէ ազվամըն իհսանի իլահի օլան հուրընթիւ իսթիհալ իշիւն մէյտանայ աթլարըլարընք մէ ժէօն-Թիւրքէր թարաֆընտան Արնաւլուտալարայ տաի թէքլիֆ օլտուան իտթիֆազըն վիճաւտի միւմբին օլտամաղընը, չիւնքի ժէօն-Թիւրքէրին արասընտայ իտթիֆազ օլմայուպ, ճիւմէսի եէքտիկէրինին ալէհիտէ պուլընտուղունտան վէ արալարընտայ իտթիֆազ հասըլ օլմայան պիւր գալմ իւր իտթիֆազայ եանալմաք պիւր նէվի ճիննէթ օլուպ, պիւնալնալէհ իշիւն էմիրտէ բէնտիլ իրինին լայըղը իւր իտթիֆազ իթմէսի, վէ պու իտթիֆազ իւղէրինէ իպրազ իտէճէթլէրի ֆէտաքեարըղայ գարըն սէր գալմըն եարտըմ իտէճէկի պէյան օլտուանտուր:

Ի ի թ Ս Ր

Ճիւմէյէ մաալիմտիւր բի մէվճուտ օլան միւլէի մէօթէմէտտինէնին ազլարայ հայրէթ վերէճէք տէրէճէտէ օլան թէրէգիլէրի իտթիֆաթ վէ իտ, իֆազ սայէսինտէ հասըլ օլուպ, հաթտայ պուլունտան պիւր դաշ աս ր մուգատտէմ, չիմտիթի հալտէ հիւրիլէթլէրինէ հայրան գալտըղըմը միւլէթլէ պիւր գայտի էսարէթ, պիւր գուլմի բէտալէթ թահտընտայ եաշամ քտալար իթէն, արալարընտայ հասըլ օլան իտթիֆազ, վէ պու իտթիֆազայ մէղճ իտիլէն զայրէթ վէ սէպաթ սայէսինտէ, պու կիւնքի տէրէճէյի ալիւ հիւրիլէթ վէ մէաէնիթի պուլմուլարտըր:

Ալէմի ինսանիէթ իշիւն քեապուտի պէլա քէսիլմիշ օլան Սուլթան Համիտի պիւհայանըն թէնէթիտէ մէքըր օլան մայէի ֆէսատ սաիգասը իւր թէպատսընայ գուլում իթմէսի վէ գուլում մէյտան պուլումսը իսէ, թէպատսընըն միւտթիֆիգան վէ միւտթէիտէն հարէքէթ իթմէմէսինտէն իւրու կէլմէքտէ վէ թէ-

պատսըն վատիի ճէհալէթ վէ վաշէթտէ գալմասը իսէ, մէնվիի զամիլիի գօլայըք իւր մէյտանայ շըգարսպիլէք իշիւն, բէնտիլինէ պէօյիք պիւր ֆուրսաթ վի վէլէ օլտուղի վէ պուլնայ իշրարի իւմմէթին հէլաք օլմասընայ սէպէպտէ իհրարան արասընտաթի նիֆազ օլտուղունտան հէր հալտէ հէր նէ իշիւն օլուր իսէ օլտուան Մէյտանէ աթլարմաք պիւր զալմ իշիւն էվէլ էմիրտէ իտթիֆազ, պատէհու սէպաթ վէ մէտհանէթ լաղըմ կէլէճէկի, վէ ռնլար եէքտիկէրինէ մէղճ էտիլէր իսէ պիւն էվէլ էմէլէլինէ վուսուլ իշիւն միւլքիլաթայ թէսատիֆ իթմէյլէճէթլէրի աշիքեար տ ր:

Hamdi.

ՀՆԴԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ԿԱԼԿԱԹԱ, 12 Դեկ 1900

Ինչպէս գրած էի նախորդ նամակովս Կալէթայի Աղղ. վարժարանի աննախանձելի վիճակին վրայ, այս անգամ կուգամ աւելի մանրամասն կերպով բացատրել և միանգամայն պարզել այն ամեն անցուղարձը, որ իւրաքանչիւրում կերպով կը գովաբանէին եւրոպական հայ թեթեւեղէն միոյն միջոյաւ:

Նախկին բարեպաշտ հայերու կողմէ կառավարութեան քով ձգուած 4000 ոսկւոյ գումարին տոկոսովը կը կառավարուի վարժարանը, որ չի բաւեր. մանաւանդ որ գիշերօթիկ աշակերտներ ալ կան, որոնց կրթութեան գործը յանձնուած է 6-7 ուսուցիչներու: Վարժարանն ունի 80-85 աշակերտ, առանց մէկի ծախքը կը տրուի Կալէթայի Ս. Նաղարէթ եկեղեցւոյ հասոյթներէն, 16 աշակերտինը ճաշալէ Պաթալիքի միաբանութիւնը կուտայ, և 10ը աշակերտներն ալ հանգուցեալ Մարիամ խաթուն Յսկոբեանի կողմէ եղած պաշտպանութեամբ կը խնամուի, այս տիկինը արդէն հիմադիրը եղած է բարենդպատակ ձեռնարկին: Ասոնցմէ զատ երկու աղջիկ և բարեպաշտ տիկիններ. տկն. Սէթ և տկին Մաս՝ ամսական 22 ր. (15 ր. մէկ անգլ. ոսկի է) յատկացնելէն զատ վարժարանին ինպատ տակն տարի վիճակահանութիւններ կ'ընեն և 100-150 ոսկի հասոյթ կը գոյացնեն: Հելի տնունով տիկին մըն ալ ամեն տարի աշակերտներուն հագուստ չիւնի կուտայ իր անձնական ծախքով:

1895ին Սէթ Արգարեան, որ հաս Թրուքիւն Արգարեան կը կոչուի վարժարանի ղեկի ուղորմելի վիճակը տնոնելով 36,000 ո. ծախսելով նոր ղեկ մի շինած է և իր մինչև 66 տարեկան հասակին մէջ իսկ մեծ գոհութիւններով օգտակար եղած է Աղղին և իրեն ներկայացող աղքատներուն: Իր հայրն է Գրիգոր Արգար և այս վերջինիս եղբայրը Յարութիւն Արգար. այս երկու անձերը թէ հնդկաստանի և թէ եւրոպայի մէջ մեծ համբաւ ստացած են իրենց վաճառականութեամբ, ճիշդ 90 տարի է որ կը շարունակեն իրենց օֆիսը: Սակայն ցաւ է ըսել որ իրենց այս օֆիսին մէջ Յարութիւն Արգարէն զատ հայերէն գիտցող չի կայ. տղաքը, որ իրենց ուսումը Լօնտօն առած են, բնաւ հայերէն չեն գիտեր, նմանապէս Կալէթայի հայերը իրենց մայրենի լեզուն չգիտնալէն զատ անունին ալ փոխած են, բոլորովին օտարացած. իրենց զաւակներն անգամ օտար վարժարաններ կը

խրկեն. բոլորն ընդարձակ նշանակութեամբ հայատեացներ եղած են:

Հայոց վարժարանի մէջ գտնուած տղաքը նոր Զուլայեցի են: Աղղկանց վարժարան չէայ. այնպէս կը կարծուի թէ՝ եթէ աղղկներու համար վարժարան մը ըլլայ, այս օտարամուլութեան հոսանքին առաջին կառնուի, և այս ալ բարեպաշտ տիկինները կարող են ընել:

Մի քանիներու հարցուցի թէ ինչո՞ւ համար ձեր զուակները հայոց վարժարանը չէք խրկեր. «Հոն ուսում չկայ, լաւ թօփ խաղալ և զինավարժութիւն կայ», պատասխանած են, իրաւ ալ այսպէս է. եղած նուիրատուութիւններուն, բարեպաշտ տիկիններու ջանքերուն հակառակ, տղայ մը բաւականաչափ ուսում առնելով չէ ելած վարժարանէն, ամենքն ալ առանց բացառութեան կցկտուր բանի սորվելով վարժարանէն դուրս ո՞ր է օրինաւոր գործի չեն կրցած ըլլալ, բայց խանութպաններու քով պարզ ծառաներ ըլլալէ, ոմանք ալ իրենց զրասեղանի տարիները պարապ անցընելէ վերջ գացած են մէյմէկ արհեստ սորվելու:

Հոս պէտք է յիշել, որ աղքատ տղայոց համար բոլորովին գոց է վարժարանի դուռը, ամեն ատեն կը հանդիպինք աղքատ հայերու, որ իրենց զաւակաց ձեռքէն բռնած կը դիմեն հոգաբարձութեան, կաղաչեն, կը պաղատին. բայց ի դուրս. «այսօր դնա՞ վաղը եկուր» ի տաճկական սխտէմով, ամեն օր կը խաղցուն, որով խեղճ հայրը կստիպուի հալար անգամ սորջանալ զաւակ ունեցած ըլլալուն. խեղճ հայրեր կըսեն, որոնք իրենց զաւակաց լաւագոյն ապագայի յոյսերու ապաւինած՝ կ'ուզեն մոռնալ և մեղմացնել իրենց վիշտերը, բայց ոտ հոգաբարձուները, որոնց միակ պարտականութիւնն է առանց խտրութեան իրենց հոգածութեան յանձնուած Աղղ. վարժարանը ընդունիլ նաեւ աղքատները, կրթել զանոնք, ալատել թշուառութեան անողոր ճիւղաններէն, և այսպէսով ցոյց տալ իրենց ազգասիրութիւնը, և ո՛չ թէ քմահաճ դրութիւնով իրենց աչքին հաճոյ կրցած անուս և տղէտ ուսուցիչներով վարժարանը ախոռի վերածել ու տեղի տալ հայ հարուստներուն որպէս զի իրենց զաւակները օտար վարժարաններ խրկեն և աղղին ոյժը ջլատեն զանոնք օտարութեան մատնելով:

Այս տողերը գրած ատենս ակնարկ մը նետեցի իրերու դրութեանց մասին, տեսայ որ աւելի պատասխանատու են տեղւոյն հայերը, որոնք փոխանակ իրենց վարժարանին տէրն ըլլալու, զայն աւելի կանոնաւորելու, թողուցիւր են այդ հոգաբարձուներու ձեռքին մէջ որպէս զի ուզածնուն պէս՝ դէպի վնասակար կողմը, դէպի փճացման ճամբուն մկշ դնեն, և իրենք անտարբեր ետ քաշուեր են. մոռնալով իրենց հայրական հոգածութիւնն ու պարտականութիւն իրենց զաւակներուն նկատմամբ:

Պաթալիքի ճաւա քաղաքի միաբանութիւնը, որ 16 աշակերտի ծախքը կը հոգայ այս վարժարանին մէջ մինչև այսօր ինչո՞ւ անտարբեր կը մնայ և ինքը նախաւորը մը չըլլար վարժարանին բարեկարգութեան՝ հրաւէր կարգալով նաեւ հոն գտնուող հայ ժողովուրդին: Ապա թէ ոչ իրարմէ տարբեր շահերով և նկատումներով խեղճ տղայոց ապագան վրտանգելը աւելի լաւ է. միւնոյն վճարումներով՝ այդ տղայքը վերցնել ապականիչ և ըսպանիչ մթնոլորտէն ու տանիլ զետեղիլ զանոնք ուրիշ աւելի օրինաւոր և արդիւնաբեր վարժարաններու մէջ, որպէս զի 5-6 տարի

աշակերտներէն վերջ կարողանան ապագայ մը ունենալ: Եթէ չարունակուի այս գրութիւնը թաղէոտի պէս վարժապետներու շնորհիւ, վարժարանը իր անկանոն և անդրջնհեղեղեան վիճակէն մաղի մը չափ չպիտի չիլի և այն անմեղ մանկտին ալ, որոնք տեսակ մը հին գլուխ դահիճներու ձեռքին մէջ կը գտնուին, բոլորովին փճանալով պիտի երթան կորսուին այն ձեռք, ինչպէս որ կորսուեցան և օտաւրացան ներկայ հոգաբարձու ազգասէրներու պէս խնամոց լանձնուածները: Հոգաբարձուներու գործունէութիւններէն զատ նոյնքան ևս առաւել ազգեցութիւն ունի աշակերտին ուսման, կրթութեան, զարգացումի և բարգաւաճման վրայ դաստիարակին կամ լաւ է ըսել մեր պ. Թաղէոտին բարոյականը:

Կալկաթայի Ազգ. վարժարանը մէկ վարժապետ մը միայն ունեցաւ տղայոց ուսման և կրթութեան հոգ տանող, այն ալ Տէր Թորոս Բաճանան է, որ իր բոլոր հմտութիւնն ու կարողութիւնը ցոյց կուտար, իր ամբողջ ուշադրութեան առարկայ եղած էին վարժարանին բարեկարգութիւնը և տղայոց դարգացման գործը. նա երբէք չուենցաւ այն կէտերը, ինչ որ ունի արդի վարժապետը, որը փոխանակ իր նուիրական պարտականութիւնները ձանաչելու և տղայոց կրթութեան հոգ տանելու ինքը նախապաշար կըլլայ դէպի անբարոյականացման և քննաքննման...

Օր մը հարցուց բարեկամներէս մին աշակերտներուն մէկուն «—Յիսուս: ո՞վ էր?» «Քրիստոսի եղբայրն էր» պատասխանեց: Արգահատութեան արժանի այս անմեղները, որոնք հոգաբարձութեան անկարելիի և միանգամայն ազդեցութեան զոհերն եղած են: Առտակաւին մտածել, որ ներկայ հոգաբարձութիւնը չնորհիւ անկարող և միանգամայն անբարոյական վարժապետի մը արդիւնաբերութիւնն է տղայոց ապագային փճացումը, և Կալկաթայի հայերն, իրեն ծնողները և միանգամայն լիազօր իրաւունք ունեցողներ իրենց վարժարանի վրայ, առանց զգալու իրենց զըլխուն վրայ գտնուած վտանգին ծանրութիւնը, բոլորովին ինքզինքնին օտարութեան տուած, կ'սպասեն որ ամեն պատգամները երկիրքէն մանանայի պէս իջնեն և կարգադրեն իրենց ապագայի և լուսոյ տաճարները, ինչ սր կորսուած է ներկայ հոգաբարձութեան և համբաւոր անբարոյական վարժապետի ներկայ պաշտօնավարութեամբ:

Իսկ իր միջամտութիւնն օգտակար ըլլալու ջանքով պ. Մեսրոպ Յ. Սեթեան, վարժարանին այս աննախանձելի վիճակին շատ մօտէն տեղեկութիւններ ունենալով հանդերձ, ինչպէս կը համարձակի առանց կարմեղու «Արմէնիայի միջոցաւ գովաբանութիւններ ընել, արդե՞օք ինքն ալ կը պատկանի այն գասակարպին» որ գաւաթ մը օղիի համար անարժաններու քուէ կուտան: Արդէն Մ. Սեթեանի գրածները կը ուզեն թէ երբէք մտադրուչէ ունեցած վարժարանին անկեայ վիճակին որ և է նպաստաւոր ծառայութիւն մատուցանել, բա ի ինքզինքը փառաբանելէն, կերեկի թէ անմեղ տղայոց փճացման և անբարոյականացման մէջէն կուզէ իրեն բաժն հանել փառքի և անմահութեան դաբնին...

Ազգ. հոգեւոր իշխանութեան ուշադրութիւնը հրաւիրելով, կը յուսանք որ կարող ուսուցիչներ և ազգասէր առաջնորդ մ. իրակելով Կալկաթայի հայոց վիճակը կը բարեփոխէ և միանգամայն կը հեռացնէ այն օտարաշուն հոսանքը, որ Ազգ. վարժարանի յետադէմ վիճակէն առաջ եկած է:

ԿԱՐՕ

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՍՏԱՆԷՆ

Արդուին, 23 Դեկտ. 1900

(Շար. նախորդ թիւէն)

Հրապարակ նետուեցաւ, ընդհ. հայութեան կողմէ սիրով ողջունուեցաւ «ձայն բաղմաց, ձայն Աստուծոյ» ըսելով ամեն որ հաւատաց թէ ազգային ազատութեան նախանձախնդիր գիւղերը, այսինքն Հայ Յեղափ. կուսակցութեան ղեկը վարող մարմինները այս անգամ անպատճառ գոհացում պիտի տան ժողովրդի արդար պահանջին: Ուր է՞, ո՞ր ծակերը մտան այդ անուանական հայրենասէրները, ճիշդ այն պահուն, երբ «Միութիւն»ը իր պաշտպանած գաղափարի իրականացման գործնական միջոցը ցոյց տուաւ «Համագումար ժողով» առաջարկելով, եթէ մեր կուսակցութիւնները իսկական յեղափոխականներ ու ճշմարիտ հայրենասէրներ ըլլային, ներքին կռիւները վերջ մը տալու բաղձանք, ամեն ջանք ի գործ պիտի դնէին ժողովի գումարումը փութացնելու համար, իրողութիւն մը. զոր օրօրոցի երախաներն և Գ ա ս ը մ ա շ ա յ ի է չ ե ռ ն ալ 'ը վկայեն, որոնք թէ և իմացականութենէ դուրկ' բայց ունին իրենց կարգին և աստիճանին մէջ գտնողութիւն ու խստապահանջութիւն: Երախան երբ իր նօթութիւնը ղդայ, կը ճչէ, օրօրոցին մէջ կը շարժի, կաթ կ'ուզէ, էջը՝ երբ մի անգամ ցետին մէջ կոխէ, անցեալի փորձէն խրատուելով երկրորդ անգամ կը զոհանայ, մինչև իսկ իր տէրն ալ եթէ առաջնորդէ զինքը ցետին մէջ տանելու, պահ մը խստապահանջութեամբ կ'ապստամբի անոր դէմ և չորս ոտքերը գետինը ցցած, քայլ մը անգամ չի փոխեր: Մենք՝ Հայ ժողովուրդս միթէ՞ ասոնցմէ աւելի ստոր ու միամիտ ենք, որ չի հասկնանք մեր կուսակցութեան «Համագումար ժողով» առաջարկէն խոյս տալու պատճառները:

Ո՛չ, ո՛չ, պ պ. կուսակցականներ, ա՛լ բաւական է որքան խաղացիք խեղճ հայութեան գլխին ձեր ճ ա մ պ ա ղ ու թ ե ա ն տը խուր դերը. հայ ժողովուրդս որքան միամիտ, որքան տգէտ լինինք, ա՛լ չպիտի ներենք ձեզ. մինչև ե՞րբ վերջապէս դատապարտուած ենք ձեր քմահաճոյքին ծառայել. ի շնորհս ձեր, նիւթապէս և բարոյապէս քայքայուեցանք. մեր ազգային փառապանք յիշատակներն ու արժանապատուութիւնը կորուսինք. այլևս ներելի է մեզ լուռ մնալ:

Ա՛լ ժամանակն է որ Միութեան գաղափարակից ընկերներս՝ քանի որ հայութեան մեծամասնութիւնը կը կազմենք, կուսակցութիւններէն Միութիւն կամ համերաշխութիւն ակնկալելու ցնորամտութիւնը թողունք և օգի մէջ թուծակի պէս փոխան լի միութիւն, միութիւն գոչելու. միութեան դրօշին ներքեւ համախմբուելով գոյացնենք մեր մէջ նախ գաղափարական միութիւնը և ապա գործնականին մէջ մտնելով արդարութեան միահամուռ ձայն բարձրացնենք, ու ստեղծենք մաքուր տարրէ բաղկացեալ մի մարմին, որը ազգ. ցաւերուն գործման ըլլալու, ժողովրդի պահանջներուն գոհացում տալու — հայ յեղափոխութեան շահերուն համապատասխանելու գոյնն ունենայ:

Ահա այս է բոլոր Միութեանականներու նուիրական պարտականութիւնը և այս պէտք է ըլլայ անոնց ոկրունքն ու ուղղութիւնը:

Առ այս իբր գաղափարակից ընկեր խորհուրդ կուտանք «Միութիւն»ի որ ոչ որի չխնայէ, արդարութեան և ճշմարտութեան խարազանն ի ձեռին անմահաւ յառաջ ընթանայ, հանգուցեալ «Տաւրոս»ի ուղղութեան հետեւելով ջախջախէ, տապալէ տղքին դաւը լարող չարամիտ կուսակցականներու ազդամիտ ազգասէրներու հայակործան ձգտումներու ազդեցութիւնը: Այսպէսով վերջապէս հրապարակը մաքրելու է:

Ե. Տ.

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Առ Տիար Յ. ԻՍԿԷՆՏԷՐ, Բարիդ,

Մեծ գոհունակութիւն պատճառեց տեղւոյ գաղթականութեան Ձեր այն պատասխանն, որ հոգաբարձութեան ուղարկած էիք իրենց խնդրանքին համեմատ, և որուն մէջ մանրամասնօրէն ցոյց կուտայիք այն գումարի մասին որը՝ հանգանակուած էր ի նպաստ հայ բանտարկեց, թէ՛ այդ գումարը իր բուն նպատակին հասած է և Օրմանեան պատրիարքէն շնորհակալութեան գիր ստացած էք: Որովհետեւ անզս գտնուող մի քանի անձնաւորութիւններ . . . անձուներ և ստայօք տարածայնութիւններ հրապարակ նետուելով, ջանացին միտքերը պղտորել իբր թէ հանգանակուած գումարը իր նպատակին չէ գործածուած: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և հոս կը գտնուին մեծապատիւ անձնաւորութիւններ, որոնք կը ջանան զանազան ոտորին միջոցներով խափանել ո՛ր և է Սզգ. գործ:

Ուստի հրապարակաւ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ Ձեր աղնուութեան, որ Ձեր գրութեամբ լուեցուցիք չարախօս խմբակը:

ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Pro Armenia

Բարիդի մէջ հրատարակուի սկսած է հայկական գաղտին նուիրեալ գաղղիերէն թերթ մը Pro Armenia (Հայաստանի համար) անունով: Թերթը կը հրատարակուի երկու շաբաթ մի անգամ, որուն քանի մը թիւերը շնորհակալութեամբ ստացած ենք: Pro Armeniaի խմբագրապետն է պ. Բիէռ Բիյառ: Իսկ խմբագրական մասնախումբը կազմուած է պ. պ. Բլէմանսօ, Անաթոյ Ֆրանս, Ժան Ժօնէս, Ֆրանսի ալ Բրէսանէ, է, տը Ռօպէրդի: Յարգելի հրապարակագիրները պիտի ջանան պաշտպանել Հայկ. հարցը և երևան բերել Մեծ Մարդասպանին գործած ոճրագործութիւնները, յիշեցնելով եւրոպայի պարտականութիւնները որ դաշնագիրներու զօրութեամբ իրաւունք ունի կատարելու ի նպաստ մորթուող ժողովուրդներուն:

Թերթին բաժնեգիրն է տարեկան 10 ֆր. բաժանորդ գրուիլ փափաքողները թող դիմեն Թերթին քարտուղար պ. Ժան Լենկէի հետեւեալ հասցէին

M. Jean Longuet 17, Rue Cujas Paris

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՆԱՄԱԿԱՆԻՐՈՇԵՐՆԵՐՈՒ

(Timbres-Poste pour collections)

Պատիւ ունինք ծանուցանել հայ հասարակութեան մեր նոր գրասենեակը, ուր պատրաստ ենք փափաքողներու ամենայն դիւրամատչելի գներով հայթայթել ամեն տեսակ նամակադրոշմներ նամանաւանդ հելլենականներ, որոնց մասին աւելի մասնագիտութիւն և ճիշ հաւաքածոյներ ունինք:

Փափագողք դիմեն հետեւեալ հասցէին:

Agop Garabedian et C^{ie}

12, Rue de Stade 12,

Athènes (Grèce)

ՆԱՄԱԿ ԶՈՒՅԵՐԻԱՅԷՆ

Դիէլ, 2 դեկտեմբեր 1900

... հայրենակից,

Ընդունեցայ Ձեր քարթը, ես ինքս չուարած եմ ինչ գրել. որովհետեւ կը տեսնամ որ միութիւն դոյացնելու համար ո՛ր և է ջանք չի յանայութիւն ձեր կողմանէ, բայց դժբաղդաբար ամեն ճիգ ապարդիւն կը մնայ: Անհրաժեշտ է որ առաջարկուած ժողովը անգի ունենայ: Միութեան գաղափարը ժողովուրդին բւեր խաւերէն ջերմ համակրանք կողջունուի: Անկեղծ ու հեռատես յեղափոխականներն այ միութեան մէջ կը նշմարեն մեր ազգին ազատութեան մի կարեւոր գրաւականը. առանց փաստի չէ ասիկա Պառնասական ծանօթ գէպքեր կ'ստուգեն միեւնոյն ճշմարտութիւնը: Յամենայն դէպս յեղ. կուսակցութեան մէջ միութեան համար նախ փոխադարձ համակրանք դոյացնել ջանալու է: Ըստ իս, միութեան ժողովին մի միայն այն կուսակցութիւնները մասնակցելու իրաւասութիւն ունին, որոնք անցեալին մէջ յեղ. գործունէութիւն ցոյց տուած են ու ներկայիս ալ իրենց անդուլ գործունէութեամբ ապագայ կը խոստանան: Սօսքի յեղափոխականներ երբեք ժողովին մասնակցելու իրաւունք չեն կրնար ունենալ, որովհետեւ ո՛չ միայն վտանգութիւն չեն ներշնչել ժողովրդին, որ զիրենք վաղուց ճանչցած է, այլ նաեւ կրնան նոյն իսկ վնասակար լլլալ:

Նշմարելնք թէ ժողովը չկայացաւ. ի՞նչ պիտի ընէ ժողովուրդը, պէ՞տք է որ իր անտարբերութեամբ քաջալիւրէ ամեն անոնք, որ յեղափոխական դիմակին տակ միութեան գործին արգելք հանդիսացան. միթէ՞ ժողովուրդը ատով իր պարտքը կատարած վը համարէ, չէ՞ որ անոր ասպարէզէն քաշուելով մեր ներքին ու արտաքին թշնամիները կը խրախուսուին: Արդեւե՞ր փոխանակ գէպի ազատութիւն յառաջ դիմելու, կարեւոր քայլի արձեւելու յետագիւած պիտի ըլլանք. եթէ կուսա ցութիւնները չեն միանար, չէ՞ղքները քէ՞ն ընելու են: Այս ցաւալի պարագան ո՛չ յեղափոխականներուն և ո՛չ ալ ժողովրդին տրամադրութեան կը համապատասխանէ: Փոխաբերի է որ ժողովուրդի չէ՞ղք մասը, գիտնայ լաւը գնահատելու իր կոչման հաւատարմ կուսակցութեան ոյժ տայ, ինքը՝ ժողովուրդը միանալու է կուսակցութեանը—հարկ է յիշել թէ յեղ. կուսակցութեան և ո՛չ թէ խօսքի—ու այն ատեն պահանջուլ է միութիւն յեղափոխականներու միջեւ: Ժողովուրդը իր չէ՞ղքութեամբ և ո՛չ մէկ պարագայի մէջ կրնայ արգարանալ, քանի որ կան վստահելի կուսակցութիւններ, աւ որս կրնայ դիմել ամենայն ապահովութեամբ:

Քանի որ ազատութեան կռիւն ժողովրդի զին համար կը մլուի, ինչո՞ւ նա չմասնակցի այդ կռուին, առարկելով թէ յեղափոխական կուսակցութիւնները չեն միանար: Միութեան կարեւորութիւնը ու կատարելիք դերը չիմ ուրանար, բայց առանց ուրանալու յեղ. գործունէութեան մէջ կուսակցութիւններու հղբայրական մրցումը կրնայ շատ արդիւնաւոր ըլլալ այն ատեն, երբ ժողովուրդը իր նիւթական, մտաւորական ու բարոյական աջակցութիւնով վարձատրել գիտնայ արժանաւորը երբ ժողովուրդը ձեռնամուխ ըլլալով յեղա-

փոխութեան մօտէն դիտէ: Բայց զգալով թէ ո՛վ է իր շահին պտտականը: Ի մի բան երբ կարելի չըլլայ միութեան գաղափարը իրականացնել, ժողովուրդը հաշտ աչքով նայելու է յեղափոխականներու, փոխադարձ ձեռնառութեամբ յառաջ ընթանալու ազատութեան ուղիքին:

ԳԱՒԱՐԱՅԻ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

— 0 —

„ԿՈՉՆԱԿ“

Այս նոր քառածալ շաբաթաթերթը սկսած է հրատարակուիլ Պոսթոնի մէջ, և կը պարունակէ ազգային և քաղաքական շահեկան յօդուածներ: Բաժնեգրին է տարեկան 1 (2) տօլար, վեցամսեայ 80 սէնթ. մէկ օրինակը կ'արժէ 4 սէնթ: Արտասահմանի համար տարեկանը 10 ֆրանք է, հասցէն

Herbert M. Allen

14 beacon st. Boston mass

„ԳՈՒԹԱՆ“

Հ Ա Ն Դ Ե Ս Ա Մ Ս Ե Ս Յ

Հողագործական—Գիտական և Արուեստական Տիար Գարեգին Գ. Մեծատուրեան՝ սկսած Բարիդի մէջ հրատարակել հայ երկրագործութեան նպատուլ այս արդիւնաշատ հանդէսը, որ առաջին անգամ ըլլալով կը հրատարակուի հայերուս մէջ: Ի սրտէ յաջողութիւն և յարատեւութիւն մաղթելով կը յանձնարարենք հայ հասարակութեան քաջալիւրութեանը:

Տարեկան բաժնեգրին Թուրքիոյ հմր 10 ֆր.

» » Արտասահմանի » 12 »

» » Ռուսիոյ » 6 րուպլ.

Յօդուած նամակ և բաժնեգրին խրկել Տիւրքիոյ հետեւեալ հասցէին՝

K. Médzadourian

23 rue Collégiale,

Paris

ԲԺԵԿ ՍԻՄԵՈՆ ՇԱՀՆԱՋՈՐԵԱՆՅ

Մ Յ Ա Կ Ը

98 էջերէ բաղկացեալ խնամքով պ տրաստուած պրօլետ մըն է, որով Տիար Շահնաճարեանց բաղմաշինի փաստեր առաջ բերելով խտրել կը քննադատէ Մշակի խմբագրութեան վերջերս իր ուղղութենէն շեղած ընթացքը: Գրքային գինն է 1 րուպլի, դիմել Գ. Բարխուտարեանի տպարանը ի Մոսկուա:

Խ Ս Ր Ա Ջ Ա Ն

52 էջերէ բաղկացեալ պրօլետ մը, զոր հրատարակած է երբեմն Մանչեսթըր հրատարակուլ «Վալուան Ջայն» խմբագիր պ. Սուրէն Պարթեան: Պրօլետի պ հեղինակը՝ հակառակ երբեմն պ Չօպանեանի հետ ունեցած մտերիմ բարեկամութեան, ո՛վ գիտէ ի՞նչ պատճառաւ այս անգամ յամառութեամբ ուխտած է խորազանն ի ձեռին հալածել զայն, զարմանալին այն է որ այդ հալածման պահուն չէ մոռցած նաեւ աջ ու ձախ մի քանի անմեղներու ապտակել, մէկին ցաւագար, միւսին անկարելի և այլն մահդիրներ տալով: Գինն է 1 ֆր. դիմել Ս. Պրթեան, 137 Պուլկովա Սէն Միքէլ, Բարիդ:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Մէկ ու կէս ամիս առաջ, Թուրքիա վճարեց 350,000 օսմ. սակի Ռուս կառավարութեան ի հաշիւ պատերազմական տուգանքին: * * * Հեղկաստանի մահմէտականները՝ մարդասպան Սուլթան Համիտը Մարգարէի խալիֆայութեան արժանազուրկ հռչակելով, դահլիքեցութեան ֆէթվան հրատարակելու են վճռականապէս:

* * * Սուլթանը վերջերս տեսնելով գերմանացիներու քաղաքական սերտ յարամերութիւնները, տեղւոյն դեսպանին հետ տեսակցութեան պահուն ինքզինքը վերջին ծայր Անգլիոյ համակիր ցոյց տուած է:

* * * Ձինական կառավարութիւնը 300 միլիոն տօլարի փոխառութիւն մը խնդրած է ամերիկեան ընկերութենէ մը, որուն կառավարութիւնը արամաղի է երաշխաւորել:

* * * Տեղական թերթերը կը գրեն թէ՛ Մարկեդոնիոյ մէջ քաղմաթիւ յեղափոխականներ: ձերբակալուած են, որոնցմէ զանազան վնասակար թղթեր և ռազմաթերթ գտնուած են: Կըսուի թէ՛ տեղական իշխանութիւնը Սուլթանի կեանքին դէմ դաւադրութեան խորհուրդ պարունակող թղթեր ալ գտնելով, ըստ Բ. Դրան որոշման 70-80 զիւղայի պուլկարներ արաքսեր է երկրէն: Սօֆիայի Մակեդոնական կոմիտէին հետ յարաբերութիւն ունեցած ըլլուն համար: Կ. Պալէն վերջն հեռագիր մը կը ծանուցանէ թէ՛ ամեն այն պուլկարները, որոնք յեղափոխականներու հետ յարաբերութեան մէջ կը գտնուին և զէնքեր կը պահեն, ըստ սուլթանական հրամանի զինուորական աստիճանով պիտի դատուին:

* * * Ս. Բէթրպուրի մէջ Ջարի կեանքին դէմ դաւադրութիւն մը պատրաստած են ոչնչականները, որոնց մէջ ուսանողի մը յանձնուած է եղեր սպանութիւնը կատարելու դործը. ուսանողն ու իր մեղաւորները ձերբակալուելով բանտարկած են:

* * * Պոլսոյ մէջ Սթեանօֆ անուն պուլկարի մը տպարանը Մակեդոնական բօմբէի կեղծողն իկատուելով տեղական իշխանութեան կողմէ տպարանը փակուած և անորէն բանտարկուած է:

* * * Վիեննայի մէջ կը տարածայնուի թէ՛ Պուլկարական բօմբէն՝ որոշեր է սպաննել Ֆերդինանտ իշխանը, Մակեդոնիոյ յեղափոխական շարժումը կասեցնելու ջանքեր ըրած ըլլալուն համար:

* * * Կրեմէի իշխան Ժէօրժի Եւրոպա ըրած ճամբորդութեան նպատակը ինչպէս յայտնի է կղզին Յունաստանի միացնելու համար դիմումը բնաւ չորս Մեծ Պետութեանց, որոնք գրեթէ տրամադրութիւն ցոյց տուած էին, բայց Սուլթանը իմանալով տեղի ունեցած գաղտնի բանակցութիւնները, Մեծ Պետութեանց զրկած զեկուցագրովը կը պահանջէ կղզին կառավարչական գրութիւնը իր վիճակին մէջ թողլու: Կ'աւելցնէ նաեւ թէ՛ հակառակ պարագային թուրք հասարակութեան զայրոյթը գրգռելով՝ ներքին ալէտաբեր իւրատուներու տեղի պիտի արուի: Այս առթիւ Մեծ Պետութիւնները՝ միաձայն հաւանութեամբ որոշեր են յետաձգել Կրեմէի խնդրոյ կարգադրութիւնը:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ՎԻԼՀԷԼՄՍՏՐԻՖ, պ. Գ. Արրահամեան. — Պ. Հ Ազատեան նամակաբարտերը զրկած է ՍԵՒԱՍՏԱՊՈԼ, պ. Հ. — Գրութիւնդ ստացուած է. նոր հասցէիդ կ'սպասենք: ԺԸՆԷԼ, Կոմիտէ «Հոյ ուս. ընկ.» — Ձեր պատ. նամակը չնորհակալութեամբ ստացած ենք: ԲԷՍՍՈՒՆՆԷ, պ. Մանուկ Գրիգորեան. — ՍՈՒՉՈՒՎԱ, «Անի Ընկերութիւն» — Դեռ մինչև երբ սպասելու ենք Ձեր պատասխանին: